



ԱԶԳԱՅԻՆ

Պարոնի վեհ ճահը՝ ամանորի առթիւ շնորհաւորական հեռագիր մը ուղղեր է ն Ս. Օժու-թեան՝ վեհ. Հայրապետին։

—Վեհ. Հայրապետը՝ Հայ եկեղեցւոյ իրաւանց բռնաբարումի խնդրոյն վրայ Ռուսիոյ Մայր Կայսրուհիին ալ խնդրագիր մը ղրկեր է։

—Սուլթանը Բ. Աստիճանի Մէճիտիյէ պատուանշան տուեր է Երուսաղէմայ մէջ Պատրիարքական Փոխանորդ Ներսէս Արքեպիսկոպոսի եւ Երեւմտից տեառն Մագսուտեան Տ. Ղեռնգ վարդապետի։

—Նախիջևանի բնիկներէն Յովհաննէս Ա. ճէմեան՝ իր հարստութիւնը 120,000 ռուպլի Պոլսոյ Պատրիարքարանին կտակեր է, պայմանաւ որ առկուր յատկանայ աղքատիկ վարժարանաց ու աղքատաց։

—Ռուսիոյ մէջ բանտարկուած ու յետոյ անպարտ արձակուած քանի մը անձինք՝ Ծառնիկի խթման օրը կուտակալին կողմէ կանչուելով, ծանուցուել է իրենց որ կրնան երթալ Եւրոպական Ռուսաստան կամ ուրիշ տեղ մը։ Ասոնցմէ իրաւագէտ Սպանդարեան Մոսկուա գացեր, բըժիշկ Նաւասարդեան Ռուսիայէ դուրս ելեր եւ Պ. Մալխասեան Նոր Նախիջևանի մէջ հաստատուել է։

—Վեհ. Հայրապետը հացկերոյթ մը տուեր է Էջմիածին այն Ռուս Գաւառացիներուն, որոնք պաշտպանած էին Երեւանի ամբաստանեալ հայերուն դատը։

Վարձատրումներ

—Աղէքսանդրաքօլի մէջ ցորեկ ժամանակ դաշունահար սպաննուած է Ռուս աւագ քահանայ Վասիլիօֆը. որ երեք հայ գիւղեր ուսուցընելէ յետոյ, պարծենցեր է թէ նոյն քաղաքի Հայոց եկեղեցիին մէջ քիչ տանէն յունական ծէսով պիտի կատարուին (․․․) արարողութիւնք։

Էջմիածնի մէջ նոյնպէս դաշունահար սպանուել է Սարգիս Պոտոեան՝ յափշտակիչ յանձնախմբի թարգմանը։ Նոյնպէս սպանուել է Արիստակէս Իււթեան արքեպիսկոպոսը, Կալիչի բարեկամը եւ գործիքը։

Ախալքալաքի Կորիս գիւղի Տ. Իսաչատուր քահանան սպաննուած գտնուել է անկողնոյն մէջ։

—Ն. Վրեմ. Բարթոլ Բաշա 10 սոկի նուիրած է Երամեան Յորեւիանին։

Սոյն Յորեւիանին համար թէ ի Գահիրէ եւ թէ՛ քաղաքի մէջ կատարուած հանգանակութեան գումարը մինչեւ ցարդ 115,000 ֆրանկներ է։

—Տեղւոր Ձէյթունի Բարեկամացի բնիկներու թիւը Բ. անգամ ըլլալով 10,000 անհոգեւորացիներ ղրկած է անցեալ շաբթուան 10-15-ը նպատակին գործածուելու համար։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարիզ 15 Փետր. 1904

ԶԷՅԹՈՒՆԻ ՈՐԲԵՐՈՒՆ 100.000 ՖՐԱՆԿԸ

Ճանապարհորդութենէս վերադարձին, զոր յաճախ կը կատարեմ, — արհեստիս բերմամբ, — դէպի Անվերս և Լոնտոն, ստացայ զրկած ֆառերնիդ, որով կը փափագէիք թղթակցութիւններուս շարունակութեան: Յարգելով Ձեր խնդրը, այս անգամ պիտի գրեմ ազգային խնդրոց վրայ, յաջորդին թուղով Ֆոլի Պէրժէր և Բարիզիսնայ տեսարանավայրերու մէջ ներկայացուած «Եօթն մահացու մեղք» և «Կարմիր Պատարագ» ռէվիւներուն վրայ գաղափար տալ «Հայեցի»ի Պատ. ընթերցողներուն:

Բիզանդիոնի Բարիզեան թղթակցութիւններուն մէջ կարդացուեցաւ թէ Բարիզի հարուստները, — որոնք մատի վրայ կը համբուին, — չեն ուզած ստորագրել, — հակառակ էջմիածնայ թեմ ըլլալուն, — Մայր Աթոռոյ յուզեալ խնդրոյն առթիւ թէ առ Վեհ. Հայրապետն և թէ առ Նիքոլա Բ. Չարն ուղեալ հանրագրերը: Պատմութիւնը արդէն այդ տեսակ անձանց ճակտին հարկաւոր կ'իբր պիտի դրոշմէ. ինչ հարկ որ մենք զայն կանխենք, ինչ որ ճշմարտն է սակայն, այդ մատի վրայ համբուող հարուստներէն Պ.Ռ. Մարկոսեան, ոչ միայն չէ հակառակած, — ինչպէս որ գրուած էր, — այլ ընդհակառակն՝ աշխատողները խրախուսած և գրգռած է, բողոքելու կողմնակից եղած է. բայց, վերջին պահուն, ձեռնպահ մնացած է և չէ ստորագրած իրմէ աւելի հարուստի մը հաճոյք պատճառելու և կամ խաթրը չկտրելու համար, այսպիսի անկասար խնդրոյ պատճառաւ:

Պ. Ռ. Մարկոսեան գրամ չտալիք չընելու ազգին, և եթէ այս տարի մատրան 200 ֆրանք տուրքը դեռ չէ տուած՝ այդ չապացուցանելու թէ տուող չէ: Ով գիտէ ինչ պատճառ ունի: Որչափ որ ռեսուսիտացիոն բմ վիճակը սա չորս տարուան մէջ, յորմէ հետէ հաստատուած եմ Բարիզ, եթէ երբեք հիմա քիչ գրամ կուտայ, և այն ալ՝ Ֆալօնիներու, ուսանող կամ ոչ, պատճառը՝ զինքը չըջապատող մէկ-երկու անխիղճ ազգակաճներուն ազդեցութեանը տակ գտնուելին է. եթէ այդ ազգակաճներէն մեկուսացուի որ մը, և բարի խորհրդատուի մը ընկերակցութիւնը վայելէ. կրնայ ազգին մեծամեծ նուէրներ ընել. կրնայ իրեն դիմողը, ըլլայ ուսանող՝ ըլլայ թշուառ, ձեռնունայն ետ չդառնալ. և վերջապէս կրնայ զիրենք պաշապանելու համար անոր ասոր գրած նամակները, որոնք իր բուն ստորագրութիւնը

կը կրեն, յարգել և խոստացածը գործադրել: Բարեմիտ և բարեմիտ մարդ մըն է Պ. Ռ. Մարկոսեան, և իր տղա բարեմիտութեամբն է որ խաղաղիկ եղած է երկու ազգասէր կարծուած հայերու ձեռքը Ձէյթունցոյ կարեւոր խնդրոյն մէջ: Բայտրենք խնդիրը, զի արժանի է հրապարակային քննութիւններու և քննադատութիւններու: Վսեմ. Լեոն Պէյ Յակոբեան Փաշայ, Եգիպտացի այդ ազնիւ և առատաձեռն երիտասարդը, 1895ի Ձէյթունի պատերազմէն անմիջապէս յետոյ տիրող անգործութենէն փաստողներուն, թշուառ մնացողներուն և այրիներուն ու որբերուն ի նպաստ 90 հազար (իննսուն հազար) ֆրանք կը յանձնէ Բարիզեան երեք հայերու որք են՝ Պ. Պ. Ռ. Մարկոսեան (միլիոնատէր), Յ. Իսկէնտէր (մէկ-երկու հարիւր հազարներու տէր) և Թնկրեան եղբարք (միլիոնատէր), խնդրելով որ իր նպատակին և փափագին համեմատ գործադրեն այդ գումարը: Այս պարոնները, որովհետեւ չէին կարող այդ գումարը ապտհովապէս ուղարկել ի Ձէյթուն կարօտեցող բաշխելու համար, և որովհետեւ չէին ալ ուզեր որ նազարբէկեաններուն ձեռքով զրկուի, — անշուշտ միւս դրամներուն քովը չերթալու համար, ինչ որ շատ լաւ մտածել են, — Թնկրեան եղբայրներուն անուամբ անգղիական արժէթղթեր կառնուի, ըստ իմանց ալ անգղիական ռանք կառնուի, եւ անգղիական պանդա մը կը տրուի միշտ Թնկրեան եղբարց անունով: Այդ գումարը այսօր 100 հազար ֆրանքի հասած է որ տարեկան 3000 ֆրանք գումար հասոյթ կը բերէ իբր տոկոս:

Որովհետեւ անունով առնուած են այդ ռանքերը, որով կը պատկանին, ինչու համար Ձէյթունցոյ օգտին չգործածուիր: Մարդ չգիտէր ասոնք: Անցեալ տարի Ձէյթունի մանկանց կոտորածին հազիւ քանի մը ֆրանքներ առին այդ ազգասէր հայերը, և չմասնակցեցան Պ. Չարազի բացած հանգանակութեան, Ձէյթունի մէջ արուեստանոց մը հաստատուելու համար, որուն բացումը, ինչպէս աշխարհ արարատ գիտէ, կատարուած է Պատրիարքարանի հրամանաւ և Սոսյ Ամեն. Կաթողիկոսին անմիջական հսկողութեան ներքեւ, բայց մէկ սանդիմ չտուին Ձէյթունցոյ համար տրուած 100 հազար ֆրանքի գումարէն:

Անցեալ տարի, նուիրատու Պէյը ուղեց որ դէթ տոկոսը ֆառկանայ Ձէյթունցոյ կրթական ու արուեստական գործին, բայց այս պարոնները չուզեցին, գովաճակեցան, հակառակ խօսեցան, պոռաքին-կանչեցին, ժամանակին պատեհ առ թին սպասենք ըսին, եւ վախճալով որ բոլորովին ձեռքերնուն չեն, հազիւ հաւանութիւններ հաճեցան տալ. չգործադրելու պայմանաւ սակայն:

Որով մնաց Հնդկաստանի պանդային մէկ գումարած Անդլիաններու Մատահաններու ևն. 100 միլիոնէ աւելի գումարները Պանդային, Վասիլի կտակին մէջ որոշապէս ըսուած չէ թէ որով պիտի պատկանէր: Հիմա արդէն չէ հոս հարցնել թէ որով պիտի մնայ այս 10 հա-

զար ֆրանքն իր տոկոսներով, եթէ այսինչ պարոնին՝ որով իրաւամբ, եթէ ազգին՝ որ յարանուանութեան, բուն Հայուն, Հասկմէական Հայուն թէ Աւետարանական Հայուն, եթէ Հայ եկեղեցւոյ զաւակաց պիտի յատկանայ՝ էջմիածնի Սինօդը, Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանը, Երուսաղէմի Ս. Յակոբեանց Եփաբանութիւնը Սոյ կամ Աղթամարայ Կաթողիկոսութեան վարչութիւնները՝ պիտի տիրանան, Ձգենք միւս յարանուանութիւններու վարչութիւնները, որոնք ևս քանի քանի ճիւղերու կը բաժնուին։ Ասոնց ամէնքն ալ իւրաւարի մէջ են, վասն զի Պ. Պ. Իսկէնտէր և Թնկրեան եղբարք չեն ուզեր լուսաբանել, և նոյն իսկ կրնամ ըսել թէ՝ Պ. Մարկոսեան, այս խնդրոյն ամէն կողմէն իրաւէկ չէ։

Նուիրատու պէյը որոշած է վերջնականապէս այս ազգասէր(ը) հայերուն ձեռքէն առնել այդ գումարը, ֆրանսական դատարանին դիմելով, ինչ որ իրաւունքն է։ Ո՞վ պիտի արգելէ զինքը եթէ չուզէ տալ այլ ևս ազգին այդ գումարը, այն ատեն ո՞վ պիտի տուժէ, եթէ ոչ Ձէյթունցին, Ինչ կը մտածէ արդեօք Եգիպտոսի մէջ հաստատուած Ձէյթունի Բարեսիրացի Գեր. Նախագահը և Տնօրէն խորհուրդը։

Կրսուի թէ նուիրատու պէյը իրաւունք ունի եղբր ՁՈՐՍ հոգի աւելցնել այդ երեքին վրայ, որոնք չեն ընդունիր ներկայացուած ընտրելիները, — ինչ իրաւունքով —, իրենց առաջարկածն ալ նուիրատուն չընդունիր, ինչ որ կ'ապացուցանէ թէ վստահութիւն չունի այլ ևս այդ տեսակ ազգասէրներու վրայ։

ՀՐԸՆՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՃԱՐՈՆ

Շաբաթ մըն ալ անցաւ և տակաւին ո և է լուր չկայ ցամաքային ճակատամարտի ոչ ալ ո և է ընդհարումի լուր ծովու վրայ։

Ամբողջ աշխարհը իրենց խիզախ և արագ գործունէութեամբ զարմացնող ճաբոնցիները հիմա ալ իրենց անգործութիւնով կը զարմացունեն։

Ըսենք թէ Ռուսական նաւերը երևան չեն ելլեր առահի, բայց ինչ կրնեն ճաբոնի մարտանաւերը, ո՞վ կարգիլէ զանոնք յարձակիլ Ռուսական եզերքներուն և մարտկոցներուն վրայ։ Կրնայ ըլլալ որ Պալթիկ ծովէն եկող Ռուսական մարտանաւերուն ճամբան սպասելով զբաղած ըլլան։

Գորէայի մէջ շաբաթ մը առաջ 20,000 զօրք համախմբած էին ճաբոնցիները, այդ թիւը մինչեւ ցարդ գոնէ 150 հազարի բարձրացած ըլլալու է, ինչով մեկնել ուրեմն ճաբոնցիներու

այս ցամաքային անշարժութիւնը, մինչդեռ Ռուսները պատեհութիւն կունենան ամեն ինչ պատրաստ վիճակի մէջ դնելու և նոյն իսկ եալու գետը անցնելով Գորէա կը մտնեն, Կամ այն է որ ճաբոնցիները չեն համարձակիր յառաջ քաշելու, Կամ այն է որ կարեւորութիւն չեն տար Ռուսական զօրութեանց, Այս վերջին ենթադրութիւնը աւելի ճիշդ ըլլալու է նայելով ճաբոն ծովակալին այն յայտարարութեան որով ըսած է թէ ամսոյս 27ին Բօրթ Արթիւրի վրայ պիտի տնկուի ճաբոնական դրօշը, ճաբոնցիք շատ շուտ շփացած կերևին, կը խօսին այնպէս որպէս թէ ճաբոն Անդլիա եղած ըլլար։

Որքան ալ որ տէրութիւնները չեզոքութիւն հրատարակած են, տյուս ամենայնիւ պատերազմը սահմանափակուած չէ երկու տէրութեանց միջեւ։ Լրագիրներն ալ կը մասնակցին պատերազմին և իրարու վրայ կը յարձակին ոմանք Ռուսիէ և շատեր ճաբոնին կողմը բռնելով, նոյն իսկ տեղական թերթ մը իր թղթէ բերգերէն պառաւական ռումբերու տարափմը կը տեղար անցեալ շաբթու Ռուսիոյ Ձարին և իր տէրութեան գլխուն։ Ալ այս հարուածներուն տակ հրաշք պիտի ըլլայ եթէ Ռուսիա չը յաղթուի...

Եւ ուրիշ։ Ռուսները կը յամառին հակառակ ամենայնի ամրացունել իրենց դիրքերը լուիկ ֆնիկի, և Ձարը կը սպառնայ հարիւրապատիկ պատուհասել ճաբոնը իր վստահութեանը համար որ առանց պատերազմի յայտարարութեան յանկարծակի յարձակում գործեց Ռուսական նաւերուն ու մարտկոցներուն վրայ, թէեւ, կրնէ Ձարը ասիկա քիչ մը ուշ պիտի ըլլայ, ինչ որ կը նշանակէ թէ Ռուսները բոլորովին պատրաստ չէին պատերազմի, բան մը որ կը նշանակէ թէ անոնք յակամայից բռնագատեալ պատերազմի կը ձեռնարկեն, ինչ որ ո և է արդարացումի տեղի չը թողուր ճաբոնի համար։

Որքան ալ Ռուսաստանը չըլլանք, ասիկա պատճառ մը չէ որ ճշմարտասէր չըլլանք, ճաբոնի ձեռնարկած պատերազմը զուտ փառասիրական գործ մըն է և ոչ թէ քաղաքակրթական ինչպէս որ ոմանք կը կարծեն։ ճաբոնի զարգացումը արտաքին է աւելի քան ներքին։ Անոնք չեն յառաջացած այն յուշիկ և բնական քայլերով որով քաղաքակրթութեանը ազգերը յառաջացած են, այլ իրենց յառաջդիմութիւնը արուեստական ուսում մըն է, և իրենց եւրոպական համազգեստներուն տակ, կրնէ Լա Րեժօրմ, ուրիշ բան չկայ բայց եթէ նախնի անտաշ ճաբոնցին։

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

«ՀՈԳ ՉԷ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Է»

Ո՛ր օրէնքէն մնացած է սա Բարեկենդանը քրիստոնէից մէջ. ինչո՞ւ չատերը այս օրերուս անլուր խենդութիւններ ընել ուխտած են. այս հարցումներուն պատասխանները գտնելու համար պատմաբաններուն դիմեցինք. անոնք ըսին թէ պատմութիւնը լուրջ գիտութիւն մ'է, ատանկ յիմարական բաներու չխառնուիր. կրօնագէտներուն դիմեցինք, պատճառ մ'ալ անոնք գտան, վերջապէս որո՞ւ որ գացինք մէկ մէկ խօսքով բերաննիս գոցեցին և մէկ կողմ ելան. մենք ալ, ա՛ս աս է եղեր ըսելով, մեր ուրախութեանը նայեցանք:

Սակայն չորս կողմերնիս այնչափ գիտելու բաներ կար որ վերջապէս, պարտաւորեցանք ինքզինքնիս մոռնալ և մեր տեսածներն արձանագրել:

Կարգ մը անձեր կը նային գիմակաւորութիւն և խեղկատակութիւն ու խայտառակութիւն չը մնար կընեն կոր, բոլորն ալ իրենց դիրքին անվայել, բայց, «հոգ չէ, բարեկենդան է» կըսեն: Վարդապետներուն ու քահանայներուն արեւդաթողը գիտէինք, բայց այս մեր դիրքին մէջ չը կար:

Բանիկ աղային տունը հագուած, սգուած մուշինաներ կուգտն, «քա՛, ո՛վ է, ո՛վ չէ» ըսելով ծանօթներու կը նմանցնեն, անոնց երթալէն վերջն ալ կը նային որ տունին աղջիկը չը կայ և հետեւեալ իրիկունը կը վերադառնայ, «հոգ չէ, բարեկենդան է» կըսեն:

Մարտիկ աղան կնիկը կառնէ՝ բարեկենդանին գիշերը դրացիներն տունը կերթայ, եկէք թուղթ մը խաղանք կըսեն, Մարտիկ աղան կը տեսնէ որ իր կնիկը ոտքերը թափլինին տակէն թէոտոսիկ աղային ոտքերուն հետ կը խաղան կոր. կռիւ հանել կուզէ, «զարար չունի, Մարտիկ աղա, բարեկենդան է» ըսելով կը համոզեն:

Աբիսողում աղան ալ ինքզինքը Պեղիկ տուտուն տունը կը մոռնայ, առանց գիտակից ըլլալու իր տանը մէջ անցած դարձածին «հոգ չէ, բարեկենդան է» կըսեն:

Շիք միւսիւին մէկն ալ իր գրպանը ունեցած ստակէն աւելի հաշիւ մը կը բանայ, գարնջրատուններէն մէկուն մէջ և կատարեալ խախբութեամբ ծեծ մը կուտէ, «հոգ չէ, բարեկենդան է» կըսեն:

Նոր փետայ մը իր վաթկած զոքանջին հետ

գարնջրատուն գացեր է, հարան ալ տունը պատն երեսին մնացեր է. «հոգ չէ, բարեկենդան է» կըսեն:

Մէկ քանի պարոններ փողոցը գլտորելով անկողինն մէջ հանդիստ պառկածի նման, մինչեւ լոյս կը թորդան. «հոգ չէ, բարեկենդան է» կըսեն:

Դեռ ըսե՞մ, սա վերջին շաբթուն խախբութիւն չի մնար կը գործադրուի, բայց ամենուն ալ վրան կը ծածկուի, «հոգ չէ, բարեկենդան է» ըսելով:

Տիկին Բեքրուկն ալ հարս ըլլալէն ի վեր տատանքէն, աշխատանքէն զլուխ առած չըլլալուն համար, աս ասանկ օր մըն է ըսելով, կուզէ որ բարեկենդանին գիշերը դուրս ելլայ, բայց որո՞ւ հետ պիտի երթար, որովհետեւ, խօսքը մէջերնիս, Ագաթան աղան՝ իր ամուսինը հին գլուխ մարդ՝ այդ տեսակ բաներու ականջ անդամ չէր կախեր. ուստի միտքը կը դնէ որ մօրաքրոջն աղջկունը ներսը տղուն՝ միւսիւ Նշանին հետ գործադրէ իր այս որոշումը, որուն հետ օր առաջէն պէտք եղած կարգադրութիւնները կընէ: Խնդիրը կը մնար միայն Ագաթան աղան կանուխ քնացնելուն վրայ, քանի որ տըղաքը արդէն իրենց հօրը կը նայէին, և ահա կսկսի դուրգուրալի հոգածութիւն մը:

—Ագաթան աղա, սա նէ՛լլախ հալաներուն սանքի օլուխ չօճուխ կանուխ պտուկինք նէ գէշ չըլլար:

—Բարեկենդան իրիկունով ալ կանուխ կը պառկուի մի ես:

—Աման բարեկենդան է եղեր տէ ի՞նչ կայ հա՛ նստեր ենք, հա պառկեր ենք, հազը՞ր քանի օր է արա սըրա կը հալաւ կօր, կըլլայ քի կէնէ կէօյիւսդ աղմիշ կըլլայ, զաթը իմին վրաս ալ կոտորածութիւն մը կայ:

Եւ այլ այս կարգի խօսքերով լուրջելով, վերջապէս ժամը ութին պառկեցան և երբ Ագաթան աղան սկսաւ խորդալ, տիկին Բեքրուկ կամացուկ մը ելաւ կարծիք ախլազէ լաթեր հագաւ, աղուորիկ, հաֆիֆ, զարիֆ, ցատկաւան մուշինա մ'եղաւ և վար իջնելով առանց սպասաւորն արթնցնելու գուռը բացաւ և կծիկը դրաւ:

* * * Ի պարնջրատան դուռը կեցող դիմակաւորներուն երեսն ի վեր պոռալով պոռալալով և ուշադրութեամբ դիտելով ցատկաւանէն վերջ, միւսիւ Նշանը անոնց մէջ չգտնելուն՝ «տակաւին չէ՛ եկեր» ըսելով հարկադրուեցաւ անկին մը նստիլ սպասել: Վերջապէս իր սպասածը հասնելով, լուս տեսած հաճի դարձաւ և անմիջապէս անոր թեւը մտած՝ պտոյտի ելաւ:

Իսկ անդին՝ խեղճ Ագաթան աղան գիշերը

կարթննայ, քովը կը նայի կնիկ չկայ, կը հարցընէ, կը վնասէ, վերջապէս խելքով կը գտնայ թէ ի՞նչ պատահած է. և որովհետեւ ինք գիշերանց չէր կրնար գուրս ելնել կէօյիւս ըլլալով վախով, ուստի տանը ծառան Խաչօ ախպարը կը ղրկէ որ անդին ասդին պտտի, կինը գտնայ եւ առնէ բերէ:

Չար պիտի ըլլայ եւ, Խաչօ ախպարն ալ ձեռքովը դրածի պէս կելլայ շիտակ տիկինին դացած գարեջրատունը կերթայ, երբ ներս կը մտնէ և խառնիճալանճ բազմութիւնն ու սաղայէլական կերպարանքները կը տեսնէ:

—Քէ՛, խառած ճօժեր, էսա՛ շէյթաներաց խումբաս ի՛, ի՞նչ ի՛, էտա զըպըռտան պիղիմբինա պանզար:

Եւ այս ըսելով կը մօտենայ իր ուրախութեամբն արբշիռ տամայի մը, որ տալըն խոսակցութեան մը պարապած էր իր քովալիէին հետ:

—Ձիկ նայէ՛, ալան խրամանք կուզի, տէ՛ քէլի երթանք. էս վախիթ պուրալարա կանտար եօրուլտիկ կէլտիս:

—Քէս քի՛լ շա՛նթ, սէթ օմլա՛, ալօն տօ՛ն. կը գոչէ մատամը, որ յոյժ կը սրտմախ այս անաղիւկալ ընդմիջումէն և քովալիէն ի հաճոյս իւր ընկերուհւոյն, Խաչօ ախպարը վռնտելու հովեր կառնէ և ի վերջոյ կիցով մը զայն ճամբու կը գնէ:

Խաչօ ախպար գիտնալով որ իր տիկինը այդ տեսակ օտար լեզուներ չգիտէր, այդ կողմէն յոյսը կը կտրէ և կերթայ յոյն տիկնոջ մը քով:

—Հա՛, ետկալատում սանի, տէ՛ քէլի, տիւն երթանք, ալան քէ կիւզի:

—Թի՛ թելիս:

—Տէ՛հ, շախկան թողի, էնկանտար տեղէն կէլմիշէմ:

—Քալէ՛, թռէլօզ ինէ:

Ասոր վրայ այդ գեղանիին ակնկալուները կարծելով որ խելճ Խաչօն ուրիշ մրցակիցի մը կողմէ զրկուած է, մինչեւ այն ատեն իրենց խմած ոգելից ըմպելիներուն ազդեցութեամբը կսկսին հրելով, հրմշտկելով գարեջրատունէն դուրս հանել և հոն լաւ տփոց մը կուտան:

Խաչօն ալ ասիկա սիրտը գնելով, ան պիշերը գինեոտունները կը լուսցնէ և հետեւեալ օրն ալ ինքզինքը գինեոտունը մոռնալով առն չկըրնար երթալ:

Իսկ տիկին Բեքրուկ Խաչօյի գարեջրատունէն ներս մտնելը տեսնելով առջի բերան թէեւ վրան մարելիքի պէս բան մը կուգայ, բայց Խաչօյին վռնտուելէն վերջը մինչև առտու զուարճանալէ ետքը չորպէսով տուն կերթայ. և ահա

անդ լինի լալ և շլթառուք ոսկերացն Բեքրուկի՝ Ագաթան աղային ցուպին տակ, և տունը կըլլայ տակն ու վրայ. բայց՝ «հոգ չէ, բարեկենդան է» ըսինք ա՛:

Դիտող

Ծ Ի Ծ Ա Ղ

Երկու հաբիթաներ՝ անցած օր Շէրիֆ Բաշայի մէկ փողոցէն անցնելու ատեննին, իրենցմէ մին՝ հռչակաւոր դերձակ-վաճառականի մը խանութը ցոյց տալով ընկերոջը, ըսաւ պարծենալով:

—Դիտե՛ս. բոլոր զգեստներս հոս շինել կուտամ:

—Ասոր չեմ հաւատար. եթէ ատանկ ըլլար, աս ճամբէն չպիտի անցնէիր. պատասխանեց ընկերը:

Ա՜րջ Թէ Յուշ

Նիւ Եօրքի մէջ արժեթղթերու վրայ խաղացողները եթէ գնող են՝ Պէյր (արջ), ու եթէ ծախող են՝ Պուշ (ցուլ) կը կոչուին եղեր:

Տղայ մը, որուն հայրը խաղացող մըն էր. մօրը կը հարցնէ. —Մայրի՛կ, հայրիկս ա՞րջ է թէ ցուլ:

—Լաւ չեմ գիտեր, կը պատասխանէ մայրը՝ Թէ ո՞րն է, մինակ սա գիտեմ որ կատարեալ գալան մըն է. . . :

Ուսուցիչ մը՝ աշակերտներուն երկրագնդին ձեւը ցոյց տալու համար, իւր հաւկթային կլոր քթախոտի տուփն հանելով ըսաւ.

—Տեսէք պարոնայք, երկրագնդիս ձեւն ըստ ամենայնի իմ տուփիս ձեւն է:

Ուսուցիչն՝ դժբաղդաբար կիրակի և տօն օրերը բառակուսի տուփ մը կը գործածէր, զոր աշակերտք կը տեսնէին: Ընդհանուր բնութեան օրը, երբ բնիչ մը.

—Երկրիս ձեւն ի՞նչպէս կամ ո՞րն է, հարցուց.

Իսկոյն տղաքներէն մէկը պատասխանեց.

—Հասարակ օրերը կլորակ է, իսկ կիրակի և տօն օրերը՝ բառակուսի. . . :

Օրիորդ մը հարցուց իր հօրը թէ, ի՞նչու համար կը տեսակցի այն ինչ մարդուն հետ, զոր շատեր խորգալիս կանուանեն:

—Հոգ մի՛ ընելի զաւակս, բժիշկներն ալ հիւանդներու հետ կը տեսակցին, բայց անոնց ունեցած հիւանդութեանց չեն մասնակցիր:

Հարսնիքի մը մէջ, ճաշի ժամանակ, երկայնակեցութեան վրայ կը խօսէին.

—Մեր ընտանիքին մէջ, ըսաւ զոքանշը, մինչև խոր ծերութեան կապրին. հայրս որ գեղազօրծ մըն էր հարիւրը անցունելէն ետքը մեռաւ.

Փետան ցաւալից կերպով. —Ախ, ըրաւ. առիկա ինծի առաջուց ըսելու չէիք. . .

Տան մը մէջ.

—Ույ ճանրմ Պողիկոտոս աղա. հազար հեղ ըսիք չիլթէյի գլխու համար առնելիք ճանֆէսդ անուշ բէմպէ ըլլայ. դուն կէնէ գացեր սուղուն ընէնկ մը առերես. Բովի Իպրաքսէ հանը մին առածը տեսնաս ինչ անուշ բէմպէ էր.

—Ինչ ընենք կնիկ, պէմպէլի անիկա չէքէրին բէք աժան եղած վախթը առած ըլլաւ է:

ՎԱՀԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Կահիրէ Ապտինի գարագօլին դէմը, Սփինքս գեղարանին կից, և Շարա Մուհամէտ ալիաթը ֆէթ—էլ—էնէպա, թիւ 1

Կը պատրաստէ ոսկիէ եւ արծաթէ զարդանկար (միկէյի) եւ դրուագեալ զարդանկար.

Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Հրատարակուեցաւ առաջին թիւը հետեւեալ բովանդակութեամբ.

1. Յերժուած Սէր. Պոլսական կեանքի գրուագներ. գրած է. Պ. Ե. Սրմաքէշխանլեան. 2. Տրամներ եւ Կաղսնիք հաւաստման նկարներ. հեղինակութիւն Պ. Պ. Մառիօյի և Լօնէյի. 3. Խորհրդաւոր դաս մը. հեղ. Ֆօրթիւնէ աիւ Պօակոպէի. Տարեկան բաժնեգրին է Եգիպտոսի համար 6 ֆր. Դիմել հետեւեալ հասցէին.

Օննիկ Բարսեղեան

Էմքոխըռի Օրիենթալ, Վառնա (Պուլկարի)

ԲԱՆԻՈՐ

Օրգան «Հայ Սօցիալ-Դեմօկրատիայ»ի

Միամսեայ Հանդէս

Անտառական, Բաղադական, Հասարակական

Յունվարի եւ Փետրվարի միացեալ թիւերը հրատարակուած են.

Տարեկանն է Եգիպտոսի համար 10 ֆր.

Հասցէ է. Բաղիան

19 Պուլկարի սիւ Բոն ս'աուվ. 19

(Սիւսի)

ԺԸՆԷՎ

ՋՄԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ԵՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԵՏԵՐՍԻՆԵԱՆ

Թրիպուսալի ետին՝ հօթէլ «էն Ժօրժի կից.

Ամեն սեսակ լաւ նպարեղեցներէ զաւ. Ձմիւն. Ահայեն բերուած ընտիր օղի, գինի, մէք, կարագ, աճառ, տուկերով գոնէրփաներ, պատրաստ անուշեղէն եւ օշորանկեր՝ նարինջ, բայ, քարմ ընկոյզ եւ չում (գրգռոյզ). նաեւ Ալաշէհիի հանգային ջուրը որ դժուարամարտութիւնը կը դարմանէ.

Սոյն վաճառատունը կը խոստանայ իրեն դիմող յաճախորդները գոհացնել անխաղախ ապրանքներովը եւ գիներու չափաւորութեամբը.

Մեր այս քսածը հաստատելու համար այցելութիւն մը քաւակաւ է.

Մեծաքանակ ու փոքրաքանակ յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին.

6

ՏՕՔԻՕՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքապետագ Խիսանին

Այս անգամ Աղեփաւորիս հաստատուած իշնէրով, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հասարակութեան, որ ամեն օր առաջօրէն ժամը 9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կրկնողուն իր սան մէջ, Աթթարին փողոց թիւ 31. Մզկիթին դէմը, երկրորդ յարկ.

Ներքին եւ փրաքուծական հիւանդութիւններու հետ, կը դարմանէ նաեւ երախաներու հիւանդութիւնները, 15 արոյ ժամանակահատուկ փորձառութեամբ.

Յաջող կերպով կը դարմանէ նաեւ Աճիօնաւորութիւնը եւ Մորժիկաւորութիւնը, որոնց դէմ հեւարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած են այդ մոլորութիւնը.

9

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒԾԻՆԵԱՆ

Նոր Բաղդիթ պատկերազարդ, Ֆրանսահայ Երկու հասոր՝ 1874 մեծադիր երեսներով.

Ազդ. — Մատենագիրն փափաքելով որ իր երկասիրութիւնն ժառանգի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մասնաւոր որ իւր նպատակն է ամենին չլահել, այլ փառսով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորները ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցէով.

M. G. DE LUSIGNAN

108. Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ